ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բրյուսել, 3 դեկտեմբերի, 2008 թ.
COM(2008) 823/4

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ և ԽՈՐՀՐԴԻՆ

Արևելյան գործընկերություն

{SEC(2008) 2974}

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ և ԽՈՐՀՐԴԻՆ

Արևելյան գործընկերություն

1. Փոփոխվող համատեքստ

Եվրոպական Միությունը մեծապես շահագրգռված է իր Արևելյան սահմանների մոտ կայունություն, ավելի լավ կառավարում ու տնտեսական զարգացում տեսնելու մեջ: Միևնույն ժամանակ մեր գործընկերներն Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում բոլորն էլ ձգտում են խորացնել իրենց հարաբերությունները ԵՄ-ի հետ: Միության քաղաքականությունը նրանց նկատմամբ պետք է լինի խիստ ակտիվ ու միանշանակ. ԵՄ-ն պետք է մեծապես աջակցի այս գործընկերներին ԵՄ-ին մոտենալու նրանց ջանքերի մեջ և տրամադրելու է այն ամբողջ օժանդակությունը, որն անհրաժեշտ է դրան հանգեցնող բարեփոխումներն իրականացնելու համար՝ Եվրոպական Հարևանության Քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում յուրահատուկ Արևելյան ձևաչափի միջոցով:

Վերջին 15 տարիները շրջադարձային փոփոխություններ են առաջ բերել ԵՄ-ի արևելյան թևում: Եվրոպական Միության և Արևելյան Գործընկերների միջև Գործընկերության և համագործակցության համաձայնագրերը կնքելուց ի վեր միմյանց հաջորդող ընդլայնումները հանգեցրել են աշխարհագրական առումով ավելի սերտ մերձավորության, մինչդեռ ԵՄ-ի կողմից աջակցություն ստացած բարեփոխումներն այս երկրներին քաղաքական ու տնտեսական առումով ավելի մոտեցրին ԵՄ-ին: ԵՄ-ն գնալով ավելի մեծ պատասխանատվություն է ձեռք բերում իր գործընկերների նկատմամբ, որպեսզի օգնի նրանց դիմակայելու այն քաղաքական ու տնտեսական մարտահրավերներին, որոնց հետ նրանք առնչվում են, և աջակցի ավելի սերտ կապեր ունենալու նրանց ձգտումներին: Արդեն ժամանակն է կտրուկ քայլ կատարել այս գործընկերների հետ հարաբերություններում՝ առանց վտանգելու ԵՄ-ի հետ իրենց հետագա հարաբերությունների հետ կապված առանձին երկրների նկրտումները:

2008 թվականի հունիսի 19-20-ը Եվրոպայի Խորհուրդն առաջարկել է Հանձնաժողովին պատրաստել ‘Արևելյան գործընկերության’ (ԱլԳ) առաջարկ՝ ընդգծելով տարբերակված մոտեցման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ԵՀՔ-ն՝ որպես առանձին և միասնական քաղաքականության շրջանակ: 2008 թվականի սեպտեմբերի 1-ի Եվրոպայի Արտակարգ Խորհուրդը խնդրեց, որ այս աշխատանքն արվի արագ, ինչը կհանդիսանա ԵՄ-ի պատրաստակամության ավելի հստակ ազդանշան՝ Վրաստանում հակամարտության և դրա ավելի լայն արձագանքներին հաջորդելով:

2. Ավելի խոստումնալից գործընկերություն

Սույն Հաղորդագրությունը սահմանում է Արևելյան գործընկերության առաջարկներ: ԱլԳ-ն պետք է ներկայացնի ԵՄ-ի համերաշխության անփոփոխ քաղաքական հաղորդագրությունը, բացի լրացուցիչ, էական աջակցությունից, որն ուղղված կլինի նրանց ժողովրդավարական և շուկայական ոլորտում բարեփոխումներին և նրանց պետականության ու տարածքային ամբողջականության ամրապնդմանը: Սա նպաստում է ԵՄ-ի, գործընկերների և, անկասկած, ողջ մայրցամաքի կայունությանը, անվտանգությանն ու բարգավաճմանը: Արևելյան գործընկերությունը կշարունակվի Ռուսաստանի հետ ԵՄ ռազմավարական գործընկերությանը զուգահեռ:

ԵՀՔ-ն արդեն հաջողությունների է հասել ԵՄ-ի ու նրա հարևանների միջև հարաբերությունները սերտացնելու հարցում: ԱլԳ-ն պետք է ավելի հեռուն գնա: Առաջնորդող սկզբունքը պետք է լինի առավելագույնն առաջարկելը՝ հաշվի առնելով քաղաքական և տնտեսական իրողությունները և շահագրգիռ գործընկերոջ բարեփոխումների վիճակը, զգալի օգուտ տալով յուրաքանչյուր երկրի քաղաքացիներին: ԱլԳ-ի կարևոր բաղկացուցիչ մասերից մեկը կլինի ԵՄ-ի կողմից ստանձնած պարտավորությունը՝ ավելի ինտենսիվորեն աջակցել առանձին գործընկերների բարեփոխումների ջանքերին:

Կարևոր է, որ այս գործընկերությունը կայանա ԵՄ անդամ պետությունների լիակատար քաղաքական մասնակցությամբ: Ակտիվ խորհրդարանական կապերն ու փոխանակումները նույնպես կարևոր դեր կխաղան:

ԱլԳ-ն հիմնված կլինի օրենքի գերակայության, լավ կառավարման, մարդու իրավունքների հարգման, փոքրամասնությունների նկատմամբ հարգանքի ու դրանց պաշտպանության, ինչպես նաև շուկայական տնտեսության և շարունակական զարգացման սկզբունքների նկատմամբ ստանձնված փոխադարձ պարտավորությունների վրա: Արևելյան գործընկերների հետ ԵՄ-ի հարաբերությունների մակարդակը հաշվի կառնի, թե որքանով են այս արժեքներն արտացոլված պետական գործերում և քաղաքականության կիրառման մեջ:

Համատեղ սեփականությունը կարևոր է, և ԱլԳ-ի երկու կողմերն էլ ունեն իրենց պարտականությունները: Միայն երկու կողմերում առկա ուժեղ քաղաքական կամքի պայմաններում ԱլԳ-ն կհասնի քաղաքական միավորման և տնտեսական ինտեգրացիայի իր նպատակին:

Այս նպատակներին հասնելու աշխատանքը պետք է առաջ շարժվի երկկողմ և բազմակողմ ուղիներով:

– Երկկողմ ուղին կստեղծվի, որպեսզի ԵՄ-ի ու ամեն մի գործընկեր-երկրի միջև հիմնվեն ավելի սերտ հարաբերություններ՝ խթանելու համար նրանց կայունությունը և բարգավաճումը՝ մեր փոխադարձ շահերից ելնելով: Այն կներառի պայմանագրային հարաբերությունների թարմացում՝ միտված դեպի միավորման համաձայնագրերը; բանակցությունների հնարավորություն, որոնք կստեղծեն խորն ու համակողմանի ազատ առևտրի ոլորտներ յուրաքանչյուր երկրի հետ և ավելի մեծ աջակցություն՝ հարակից պահանջները բավարարելու համար, ինչը կհանգեցնի Ազատ Առևտրի

Պայմանագրերի (ԱԱՊ) ցանցի ստեղծմանը, որը կարող է հետագայում վերածվել Հարևանության տնտեսական համայնքի, վիզաների հեշտացման հարցում առաջընթաց զարգացման անվտանգ միջավայրում, ավելի խորը համագործակցության՝ ընդգրկելու համար գործընկերների և ԵՄ-ի էներգետիկ անվտանգությունը և աջակցության տնտեսական ու սոցիալական քաղաքականությանը, որը նախատեսում է նվազեցնել անհավասարությունները յուրաքանչյուր գործընկեր երկրի ներսում և երկրների միջև: Մի նոր՝ Համընդգրկուն ինստիտուցիոն-կառուցողական (ՀԻԿ) ծրագրի կարիք կլինի՝ բարելավելու համար յուրաքանչյուր գործընկերոջ կարողունակությունը, որպեսզի իրականացվեն անհրաժեշտ բարեփոխումները:

– Բազմակողմ ուղին կապահովի նոր շրջանակ, որի ներսում հնարավոր կլինի դիմակայել ընդհանուր մարտահրավերներին: Ստորև առաջարկվում են չորս բարեփոխումներ ժողովրդավարության, լավ կառավարման ու կայունության, ԵՄ քաղաքականության հետ տնտեսական ինտեգրացիայի ու միավորման և ժողովուրդների միջև կապերի վերաբերյալ: Բազմակողմ ուղին առաջընթաց կունենա նաև մի շարք առաջնային նախաձեռնությունների միջոցով, որոնք աջակցում են, որպեսզի ԱլԳ նպատակները ֆինանսավորվեն բազմաթիվ դոնորների, Ֆինանսական Միջազգային Հաստատությունների և մասնավոր սեկտորի աջակցությամբ:

3. Ավելի խորը երկկողմանի ներգրավվածություն

ԵՄ-ի հետ իրենց հարաբերությունների հարցում գործընկերներն ունեն ոչ միանման նպատակներ, սակայն նրանք բոլորն էլ հետապնդում են մի ընդհանուր նպատակ՝ խորացնել հարաբերությունները: ԵՄ-ն պետք է բաց լինի սրա համար և առաջարկի քաղաքական շփման ավելի բարձր մակարդակ ու հիմնական ոլորտներում կապերի շարունակական ակտիվացում:

Հիմնվելով ԵՀՔ-ն ամրապնդելու՝ նախկին Հանձնաժողովի առաջարկների վրա՝ ԱլԳ-ն կուժեղացնի փոխգործակցությունը բոլոր վեց գործընկերների հետ, որը միշտ հարմարեցված կլինի յուրաքանչյուր գործընկերոջ բնորոշ իրավիճակին ու ձգտումներին: ԱլԳ-ին Բելառուսի մասնակցության մակարդակը կախված կլինի ԵՄ-Բելառուս հարաբերությունների համընդգրկուն զարգացումից:

Նոր պայմանագրային հարաբերություններ

Ասոցացված անդամության համաձայնագրերը (ԱԱՀ) կարող են ապահովել արձագանքը ավելի սերտ հարաբերություններ ունենալու գործընկերների ձգտումներին: Ավելի ուժեղ մասնակցության այս պայմանագրային շրջանակի վերաբերյալ, որը գալիս է փոխարինելու ներկայումս գործող Գործընկերության և համագործակցության համաձայնագրերին, բանակցություններ կընթանան այն գործընկերների հետ, որոնք ցանկանում են ու կարող են ստանձնել դրանից բխող ԵՄ-ի հետ հեռահար պարտականությունները: Այս նոր համաձայնագրերը կստեղծեն ամուր քաղաքական կապ և կխթանեն միացում՝ հիմնելով ԵՄ օրենսդրության և չափորոշիչների հետ ավելի սերտ կապ: Դրանք պետք է նաև աջակցեն համագործակցությանը Արտաքին և անվտանգության ընդհանուր

քաղաքականության ու Անվտանգության և պաշտպանության եվրոպական քաղաքականության հարցերում:

Համաձայնագրերի բովանդակությունը կլինի բազմազան և կտարբերակվի՝ համաձայն գործընկերների նպատակների ու կարողությունների: ԱԱՀ-ների կիրառմանը կօգնեն ներկայումս գործող ԵՀՔ ԳԾ-ներին հաջորդող փաստաթղթերը, որոնք անհրաժեշտության դեպքում կմիավորեն համապատասխան ուղենիշներ ու ցուցիչներ և կապահովեն ներքին բարեփոխումների օրակարգը:

Ժողովրդավարության առումով առաջընթացի բավարար մակարդակը, օրենքի գերակայությունը և հատկապես ապացույցը, որ ընտրական օրենսդրական շրջանակը և դրա կիրառումը համապատասխանում են միջազգային չափանիշներին, ինչպես նաև լիիրավ համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (OSCE/ODHIR) եւ ՄԱԿ-ի մարդու իրավունքների մարմինների հետ նախապայման կհանդիսանան բանակցությունները սկսելու և այնուհետև հարաբերությունները խորացնելու համար:

Այս պայմաններն իրականացնելու հարցում գործընկերներին օժանդակելու և ԱԱՀ-երից բխող պարտականությունները կատարելու հարցում նրանց օգնելու համար յուրաքանչյուր գործընկերոջ հետ կմշակվի Համընդգրկուն ինստիտուցիոն-կառուցողական ծրագիր (ՀԻԿ)՝ համագործակցության բոլոր համապատասխան ոլորտներում վարչարարական կարողությունները բարելավելու նպատակով, որը կֆինանսավորվի Եվրոպական հարևանության քաղաքականության գործիքի (ԵՀՔԳ) միջոցով:

ԵՄ տնտեսության մեջ աստիճանական ինտեգրացիա

Բաց շուկաները և տնտեսական ինտեգրացիան խիստ կարևոր են գործընկերների զարգացման և ԵՄ-ի հետ նրանց աճող գործընկերության հարցում: Ուստի ԱԱՀ-ները կապահովեն փոխադարձ մուտք միմյանց շուկաներին, ինչը նոր հնարավորություններ կստեղծի երկու կողմերի համար էլ ու կամրապնդի քաղաքական կայունությունը:

ԱԱՀ-ները կներառեն գործընկեր երկրներից յուրաքանչյուրի հետ Խորը և համընդգրկուն ազատ առևտրային տարածք (ԽՀԱԱՏ) հիմնելու նպատակը: Այս ԽՀԱԱՏ-ները կկնքվեն միայն այն բանից հետո, երբ այս երկրները միանան Առևտրային համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ) : Նրանք կընդգրկեն հիմնավորապես ողջ առևտուրը՝ ներառյալ էներգիան, և կձգտեն ազատականացման հնարավորինս բարձր աստիճանի (հաշվի առնելով գործընկերների տնտեսությունների համար բավարար ազատականացման տեմպի ոչ համաչափությունը): Դրանք ներառելու են առևտրի հետ կապված ոլորտներում կարգավորման համապատասխանեցման իրավաբանորեն պարտավորեցնող պարտականություններ և այսպիսով կնպաստեն գործընկեր-երկրների տնտեսությունների արդիականացմանն ու անհրաժեշտ տնտեսական բարեփոխումների իրականացմանը: Դրանք իրական նախադրյալներ կստեղծեն, որպեսզի կապիտալի և ապրանքների ընդլայնված շրջանառությունը (սա կարող է

ներառել համաձայնագրեր Համապատասխանության հաստատման մասին և Արդյունաբերական արտադրանքի ընդունման մասին, ինչպես նաև գյուղատնտեսական ու սննդի արտադրանքի համար սանիտարական և ֆիտոսանիտարական չափորոշիչների հետ կապված գործընկերների ձեռք բերած հավասարազորության ճանաչումը), ծառայությունների մատակարարումը (մասնավորապես որոշ սեկտորներում իրավական ու ինստիտուցիոնալ շրջանակների փոխադարձ ճանաչման վերաբերյալ դրույթների, ընկերություններ ստեղծելու ավելի բարենպաստ պայմաններ հիմնելու և գործնական նպատակներով կողմ հանդիսացող երկրների տարածքներում անձանց ժամանակավորապես գտնվելու համար ավելի մեծ հնարավորությունների միջոցով) ի վերջո ձեռք բերվեն:

Որոշ գործընկերներ կարող են պատրաստ չլինել բանակցելու և ստանձնելու այնպիսի պարտավորություններ, որոնք նախատեսում է նման նպատակ ԱԱՀ-ները կնքելու պահին: Այնուամենայնիվ, ԽՀԱԱՏ հիմնելու նպատակը կկազմի ԱԱՀ-ների անքակտելի մասը՝ պարտավորեցնելով բանակցություններ սկսել ՀԱԿ-ին համապատասխանող խորը և համընդգրկուն ազատ առևտրային տարածքի վերաբերյալ, հենց որ գործընկեր-երկիրը բավականին առաջ գնա իր նախապատրաստություններում, որպեսզի բանակցի, կիրառի ու պահպանի հեռանկարային ազատականացման արդյունքները: Հանձնաժողովի ԵՀՔ առաջընթացի մասին զեկույցները և իրագործելիության վերաբերյալ ուսումնասիրությունները կնպաստեն այս գնահատականին: ՀԻԿ-ը կօգնի գործընկերներին պատրաստվելու բանակցություններին և ԽՀԱԱՏ-ի պարտականությունների իրագործմանը:

Ավելի երկարաժամկետ նպատակ կլինի գործընկերների միջև երկկողմանի համաձայնագրերի ցանցի ստեղծումը, որը հավանաբար կհանգեցնի Հարևանության Տնտեսական Համայնքին: Սա քննարկվում է ստորև՝ մաս 4-ում:

Դրան զուգահեռ անհրաժեշտ է ձգտել միջոցների ըստ բաժինների, որոնք կհեշտացնեն շուկայի հասանելիությունը գործընկերների համար: Գյուղատնտեսության բաժնում գործընկերների հետ պետք է բանակցեն Աշխարհագրական ցուցիչների համաձայնագրերի վերաբերյալ , և անհրաժեշտության դեպքում կարելի է նախատեսել Գյուղատնտեսական երկխոսություն՝ բարելավելու համար ԵՄ-ի և գործընկերների գյուղատնտեսական քաղաքականության փոխադարձ ընկալումը, և աշխատել համապատասխանեցման ուղղությամբ: Մտավոր սեփականության պաշտպանությունը կարելի էր ամրապնդել հաստատուն երկխոսության միջոցով և գործընկերների ու Եվրոպական պատենտային գործակալության միջև վավերականացման համաձայնագրերի միջոցով: Նկատի ունենալով համապատասխան կանոնների շրջանակում զարգացող տնտեսական գործունեությունը՝ կխրախուսվի ճիշտ կառավարումը հարկային ոլորտում:

Շարժունակություն և անվտանգություն

Գործընկերներն ընդգծում են, որ շարժունությունը կարևոր լակմուսային փորձ կլինի ԵՄ հետ առնչվելու համար, իսկ անվտանգ միջավայրում շարժունակության

խթանումը պետք է առաջնայնություն լինի ԱլԳ-ի համար: ԵՄ-ն պետք է քաղաքացիների շարժունակությունը խթանի այն գործընկերների հետ, որոնք պատրաստակամ են երաշխավորել, որ ապահովելու են պայմաններ լավ կարգավորված ու անվտանգ շարժունության համար:

ԵՄ-ն պետք է գործընկերներին ապահովի 'Շարժունակության և անվտանգության' պակտերով, որոնք կներառեն անվտանգ միջավայր ապահովելու համար անհրաժեշտ թե՛ շարժունության կողմը, թե՛ պայմանները: Նման պակտերի մեջ ընդգրկված կարևոր քաղաքականության ոլորտները կներառեն՝ պայքար անօրինական միգրացիայի դեմ, ապաստարանների համակարգի բարելավում և ԵՄ չափանիշներին համապատասխանեցում, սահմանային կարգավորման ինտեգրացված կառույցի ստեղծում, որը համահունչ կլինի ԵՄ օրենսդրության հետ, ինչպես նաև ոստիկանության և դատական համակարգի հնարավորությունների ամրապնդում հատկապես կոռուպցիայի և կազմակերպված հանցագործության դեմ պայքարում: Պակտերը կբարելավեն մարդկանց շարժունակությունը՝ միևնույն ժամանակ նպաստելով հենց գործընկերների կայունությանն ու անվտանգությանը, ինչպես նաև ԵՄ սահմանների անվտանգությանը: Դրանք հարմարեցված կլինեն յուրաքանչյուր երկրին մեկ առ մեկ:

Պակտերի շարժունակության կողմն արտացոլելու է 2008 թվականի հոկտեմբերին Եվրոպական Խորհրդի կողմից հաստատված Հանձնաժողովի վերջին Հաղորդագրությունը միգրացիայի նկատմամբ համաշխարհային մոտեցման ամրապնդման մասին ու Ներգաղթի և ապաստանի մասին եվրոպական պակտը: Գլխավոր գործիքը լինելու է Շարժունակության գործընկերությունը, ինչպես որ այն սահմանվել է Միգրացիայի նկատմամբ համաշխարհային մոտեցմամբ և ներկայումս փորձարկվում է մի շարք երկրների կողմից՝ ներառյալ Մոլդովան: Վիզաների քաղաքականության ոլորտում զարգացումները կազմելու են այս՝ ավելի լայն հասկացության անբաժանելի մասը:

Վիզաների քաղաքականությունը ունենալու է փուլային մոտեցում, ինչը հանգեցնելու է վիզաների ազատականացման որոշակի պայմանների առկայության դեպքում և ունենալու է ուղեկցող միջոցներ, ներառյալ ֆինանսական օժանդակություն մեր գործընկերների համար:

Բացի արդեն թվարկված առաջարկներից, պակտերի շրջանակում ԵՄ-ն պետք է իրականացնի հետևյալ միջոցառումները:

– Որպես առաջին քայլ՝ գործընկերների հետ նախաձեռնի բանակցություններ վիզաների հեշտացման վերաբերյալ առանց նման համաձայնագրերի: Վիզաների հեշտացման համաձայնագրերին ուղեկցելու են կրկին ընդունման (readmission) համաձայնագրերը և, անհրաժեշտության դեպքում, տեխնիկական օժանդակությունը ընդհանուր օժանդակության բյուջեներով, որպեսզի օգնեն գործընկերներին այդ համաձայնագրերից բխող պարտավորություններն իրականացնելու հարցում:

– Որպես երկրորդ քայլ՝ վերանայել այս համաձայնագրերը՝ լրացուցիչ թեթևացումներ մտցնելու նպատակով, օրինակ՝ վիզային վճարները բոլոր քաղաքացիների համար :

– Մշակել անդամ պետությունների հյուպատոսական ծածկույթի համակարգված պլան տարածաշրջանում՝ քաջալերելով անդամ պետություններին ավելի ընդլայնել ներկայացվածությունը և ֆինանսական օժանդակության միջոցով հիմնել Ընդհանուր վիզաների կենտրոններ՝ ելնելով Քիշնևի հաջող փորձից:

– Այն բանից հետո, երբ վիզաների հեշտացման ու վերամիավորման համաձայնագրերը սկսեն հաջողությամբ կիրառվել, ձեռնարկել երկխոսություն բոլոր գործընկերների հետ առանց վիզաների ճանապարհորդելու վերաբերյալ : Երկխոսությունները կհիմնեն ուղիներ դեպի վիզաներից հրաժարում՝ կապված հիմնահարցերի չորս խմբի հետ՝ փաստաթղթերի անվտանգություն, անկանոն միգրացիայի դեմ պայքար՝ ներառյալ վերադարձը, հասարակական կարգի հետ կապված հիմնահարցեր, և արտաքին հարաբերությունների հիմնահարցեր՝ ներառյալ գաղթողների և այլ խոցելի խմբերի մարդու իրավունքները:

– Հանձնաժողովը սկսում է հետազոտություն՝ հաշվելու համար ԵՄ և գործընկերների ծախսերն ու շահույթները՝ կապված աշխատուժի շարժունակության ու աշխատուժի հնարավոր հարմարեցման հետ : Կախված հետազոտության արդյունքներից՝ ԵՄ-ն նպատակ է հետապնդելու բացել ԵՄ աշխատաշուկան գործընկերների քաղաքացիների համար, ինչպես նաև ձեռք է առնելու միջոցներ՝ հեշտացնելու համար միգրացիայի շրջանառությունը Շարժունակության գործընկերության շրջանակներում:

– Ապահովելու համար, որ շարժունակությունը տեղի ունենա անվտանգ միջավայրում, ԵՄ-ն պետք է նաև օգնի իր գործընկերներին կիրարկելու քաղաքական և օրենսդրական պարտավորությունները, որ նրանք արդեն ստանձնել են ԵՀՔ շրջանակներում արդարադատության և իրավակիրարկման ասպարեզում: Սա կարելի է անել ամուր տեխնիկական համագործակցության և ֆինանսական օժանդակության միջոցով, որտեղ համանման նախագծերի և TAIEX-ի դերը պետք է էականորեն բարձր լինի:

Պակտերի շրջանակներում ԵՄ-ն մասնավորապես պետք է՝

– օգնի գործընկերներին՝ հիմնելու բարձր մակարդակի սահմանային կարգավորման գործընթացներ արտաքին սահմաններում,

– օժանդակի նրանց տվյալների արդյունավետ պաշտպանության ռեժիմ ստեղծելիս, ինչը թույլ կտա նրանց կիսել օպերատիվ տեղեկատվություն եվրոպական ոստիկանության և եվրոպական արդարադատության մարմինների հետ երկկողմ համաձայնագրերի համատեքստում,

– շնորհի գործընկերներին հատուկ կարգավիճակ համապատասխան ԵՄ գործակալություններում, որտեղ՝ հնարավոր է,

– օժանդակի նրանց ԵՄ չափորոշիչներին համապատասխան ազգային ռազմավարություններ մշակելիս և արդյունավետ կիրարկելիս, որպեսզի վճռականորեն պայքարեն կազմակերպված հանցագործության, թրաֆիքինգի և բարձր մակարդակի կոռուպցիայի դեմ և կանխեն փողերի լվացումն ու ահաբեկչության ֆինանսավորումը, ինչը պետք է արդյունավետորեն կատարվի վաղ շրջանում:

Էներգետիկ անվտանգություն

ԱլԳ-ն նպատակ ունի ուժեղացնելու ԵՄ-ի և գործընկերների էներգետիկ անվտանգությունը՝ կապված էներգիայի երկարաժամկետ մատակարարման ու տարանցման հետ: Բացի բազմակողմ նախաձեռնություններից (տե՛ս բաժին 4.3.)՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով էներգիայի երկրորդ ռազմավարական վերահսկողությունը , առաջարկում է մի շարք երկկողմանի միջոցառումներ:

– ՝Էներգետիկ փոխկախվածության՝ դրույթների ընդգրկումը ԱԱՀ-ների մեջ՝ համաձայն ի թիվս այլոց նաև ԵՄ առևտրին, մրցակցությանը և էներգետիկային առնչվող քաղաքականության հետ, որոնց վերաբերյալ հարկ է բանակցել գործընկերների հետ՝ հաշվի առնելով, անհրաժեշտության դեպքում, գոյություն ունեցող Փոխըմբռնման մասին հուշագիրը :

– Ուկրանայի և Մոլդովայի հետ Էներգետիկ համայնքին անդամակցելու վերաբերյալ բանակցությունների արագ ավարտում: Անհրաժեշտության դեպքում պետք է քննարկել այլ գործընկերների վրա դիտորդության տարածման հարցը:

– Անհրաժեշտության դեպքում Մոլդովայի, Վրաստանի և Հայաստանի հետ էներգետիկ հարցերի վերաբերյալ Փոխըմբռնման մասին հուշագրի ստորագրում՝ որպես լրացուցիչ ճկուն գործիք: Դրանք պետք է ընդգրկեն միջոցառումներ օժանդակելու և վերահսկելու համար էներգիայի մատակարարումն ու տարանցման անվտանգությունը, նաև խիստ կարևոր էներգետիկ ենթակառույցները: Հայաստանի դեպքում Փոխհասկացության մասին հուշագիրն անդրադառնալու է նաև Մեծամորի ատոմային էլեկտրակայանի փակմանը:

– Զգալի օժանդակություն, որպեսզի Ուկրաինայի էներգետիկ շուկան ինտեգրվի ԵՄ-ի շուկայի մեջ՝ ճանաչելով Ուկրաինայի տարածքում գործող բոլոր ատոմային էլեկտրակայաններում ատոմային անվտանգության մակարդակի բավարար գնահատման կարևորությունը: Ուկրաինական գազի ու նավթի տարանցիկ ցանցի վերականգնումն առաջնահերթություն է, ինչը պետք է արվի նաև Ուկրաինա մտնող գազի ու նավթի հոսքի վերահսկողության միջոցով: 2009 թվականին անցկացվելու է պարտավորեցնող և ներդրումային համաժողով, որը նպատակ ունի օժանդակել Ուկրաինային իր գազի տարանցման ցանցը վերականգնելու և զարգացնելու հարցում:

– Ադրբեջանի հետ ամուր քաղաքական ներգրավվածություն՝ որպես ածխաջրածին արտահանող ԵՄ-ի միակ ԱլԳ գործընկեր՝ հիմնվելով ԵՄ էներգետիկ

շուկայի հետ Ադրբեջանի աստիճանաբար հարմարեցման և ենթակառուցվածքային ինտեգրացիայի վրա:

– Եվրոպական հանձնաժողով-Բելառուս էներգիայի մասին հռչակագրի ավարտ՝ որպես հետագա էներգետիկ համագործակցության հիմք: Այս համագործակցությունը կարող է ի թիվս այլոց նաև ներառել ածխաջրածնի տարանցում և էներգետիկ հատվածների բարեփոխումներ:

– Խրախուսում բոլոր գործընկերներին՝ մասնակցելու Խելամիտ էներգետիկ Եվրոպա ծրագրին:

Տնտեսական և սոցիալական զարգացման օժանդակություն

Որոշ գործընկերներ ունեն կառուցվածքային խնդիրներ, որոնք ծագում են իրենց այն տարածաշրջանների ու բնակչության խմբերի միջև գոյություն ունեցող սուր տնտեսական և սոցիալական անհամաչափություններից, որոնք հաճախ բաժանված են պատմական, մշակութային, էթնիկական ու կրոնական տարբերությունների պատճառով: Նրանք բոլորն էլ ձգտում են ԵՄ-ի հետ տնտեսական համապատասխանության: Այս մարտահրավերներին դիմակայելու համար ԱլԳ գործընկեր երկրները պետք է կարողանան հարմարվել ԵՄ տնտեսական ու սոցիալական քաղաքականության հետ: Հանձնաժողովն առաջարկում է՝

– Տարածաշրջանային քաղաքականության մասին փոխհասկացողության հուշագրեր գործընկերների հետ՝ որպես երկխոսության հիմք (ԵՄ փորձագետներն ու ցանցերը կարող են օգնել ազգային ու տեղական մակարդակներում վարչարարական ունակությունների կառուցման հարցում և օժանդակել ազգային զարգացման ծրագրերին),

– լրացուցիչ ֆինանսավորմամբ (տե՛ս մաս 5) համագործակցություն գործընկերների հետ պիլոտային տարածաշրջանային զարգացման ծրագրերի հարցում, որոնք անդրադառնում են տեղական մակարդակում ԵՄ միավորման քաղաքականության սկզբունքով ձևավորված ենթակառուցվածքների, մարդկային կապիտալի և փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-եր) անհրաժեշտությանը,

– ուղղակի համագործակցություն ԵՄ տարածաշրջանների և գործընկեր երկրների միջև՝ ներառյալ Հարավարևելյան, Կենտրոնական և Հյուսիսային Եվրոպայում գոյություն ունեցող անդրազգային ծրագրերի մեջ համապատասխան գործընկերների մասնակցությունը,

– ընդլայնել ԵՀՔԳ-ի կողմից ֆինանսավորվող միջազգային համագործակցությունը գործընկերների միջև սահմանների նկատմամբ, ինչպես որ այն ներկայումս կիրառվում է ԵՄ արտաքին սահմանների նկատմամբ:

4. ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՇՐՋԱՆԱԿ

ԱլԳ-ն մի նոր բազմակողմ շրջանակ է ավելացնելու իր գործընկերների հետ ԵՄ հարաբերություններին: Սա աջակցելու է ԵՄ-ի հետ գործընկերների երկկողմանի հարաբերություններում եղած առաջընթացին, ինչը շարունակվելու է կառավարվել տարբերակման սկզբունքով՝ զարգանալով համաձայն յուրաքանչյուրի ձգտումներին ու կարողություններին: Այն ապահովելու է ներկայացուցչական համաժողով դեպի անցում, բարեփոխումներ ու մոդեռնիզացիա կատարած գործընկերների քայլերի մասին տեղեկատվության և փորձի փոխանակման համար ու տալու է ԵՄ-ին լրացուցիչ գործիք՝ այս գործընթացներն ուղեկցելու համար: Այն հեշտացնելու է ընդհանուր դիրքորոշումների և միացյալ գործունեության մշակումը: Բազմակողմ շրջանակն ուժեղացնելու է կապերը հենց գործընկերների միջև ու դառնալու է բնական ներկայացուցչական համաժողով ԱլԳ հետագա զարգացումների վերաբերյալ քննարկումների համար:

Անշուշտ, իրավական և կարգապահական համապատասխանությունը էական է գործընկերների համար՝ ԵՄ-ին մոտենալու հարցում: Առաջարկված բազմակողմ շրջանակն ապահովելու է Եվրոպական հանձնաժողովի համապատասխան ծառայություններն ընդգրկող հատուկ նստաշրջանների պարբերաբար կազմակերպման կարգը և անհրաժեշտության դեպքում ընդգրկելու է անդամ պետությունների փորձագետների, ովքեր զբաղվում են ԵՄ օրենսդրության ու չափորոշիչների ներկայացմամբ ու բացատրությամբ, ինչպես նաև ազգային քաղաքականության և օրենսդրության հետ դրանց համեմատությամբ: Այսպիսով ԱլԳ-ն նախաձեռնելու է ՀԻԿ-ն օժանդակած կառուցվածքային համապատասխանության գործընթաց:

ԱլԳ-ն և Սև ծովի սիներգիան ու այլ միջազգային նախաձեռնություններ զգալիորեն լրացնում են միմյանց: Սա քննարկվում է Հաղորդագրությանն ուղեկցող Հանձնաժողովի աշխատանքային փաստաթղթում:

4.1. Գործողությունների կառուցվածքը

Հանձնաժողովն առաջարկում է բազմակողմ ԱլԳ շրջանակը կազմակերպել չորս մակարդակներում:

– ԱլԳ պետությունների կամ երկրների ղեկավարների հանդիպումները պետք է անցկացվեն ամեն երկու տարին մեկ անգամ:

– ԱլԳ-ն նաև զարգանում է Արտաքին գործերի նախարարների տարեկան հանդիպումների միջոցով ԵՄ-ից ու Արևելյան գործընկերներից՝ ներառյալ Բելառուսը, հավուր պատշաճի, որը կապված է Ընդհանուր գործերի և արտաքին հարաբերությունների խորհրդի հետ: Արտաքին գործերի նախարարներն ուսումնասիրում են առաջընթացը և տալիս քաղաքականության ուղղություններ: Աշխատանքն առանձին բաժիններում կարելի է ուժեղացնել բաժիններին բնորոշ նախարարական հանդիպումների միջոցով:

– Երրորդ մակարդակում հարկ է հիմնել համագործակցության հիմնական ոլորտներին համապատասխանող չորս թեմատիկ հիմքեր (տես բաժին 4.2.):

Յուրաքանչյուր հարթություն ընդունելու է մի շարք իրատեսական, պարբերաբար թարմացվող, հիմնական նպատակներ՝ համապատասխան աշխատանքային ծրագրով, և վերահսկելու է առաջընթացը: Ժողովներ անցկացվելու են առնվազն տարեկան երկու անգամ՝ համապատասխան քաղաքականության ոլորտում բարեփոխումների աշխատանքով զբաղվող պաշտոնյաների մակարդակում: Անցումային փորձ ունեցող անդամ պետությունները կարող են առանձնահատուկ ներդրում ունենալ այդ գործընթացում: Հարթությունները զեկուցելու են Արտգործնախարարների տարեկան ժողովներին: Հանձնաժողովը պատրաստելու է հանդիպումների օրակարգերը ԵՄ նախագահության և գործընկերների սերտ համագործակցությամբ և նախագահելու է ժողովները: Հարթությունների աշխատանքը կարող է ժամանակ առ ժամանակ խթանվել համապատասխան ոլորտների նախարարների հանդիպումների միջոցով:

– Չորրորդ մակարդակում անհրաժեշտ է անցկացնել քննարկումներ՝ աջակցելու համար կոնկրետ ոլորտների թեմատիկ աշխատանքին: Դրանց ձևաչափն ու մասնակիցները որոշվելու են ըստ անհրաժեշտության:

Իր հերթին, Հանձնաժողովը վերահսկելու է դրա ներքին կառուցվածքը՝ ապահովելու համար անհրաժեշտ համակարգումը, ԱլԳ-ի հաջող կիրարկումը:

4.2. Թեմատիկ հարթություններ

Ժողովրդավարություն, լավ կառավարում և կայունություն

Չնայած նրանց բարեփոխումների առանձին փուլերը տարբերվում են, գործընկեր երկրները հանդիպում են միևնույն մարտահրավերներին կայուն ժողովրդավարական ինստիտուտներ և իրենց քաղաքացիներին ծառայող արդյունավետ պետական կառույցներ մշակելիս ու Եվրոպական խորհրդի և ԵԱՀԿ անդամությունից բխող պարտականություններն իրականացնելիս: Նրանց շարունակական բարեփոխումները նաև պահանջում են քաղաքացիական հասարակության ավելի լայն մասնակցություն՝ ուժեղացնելու համար պետական ծառայությունների վերահսկումը և ամրապնդելու համար դրանց նկատմամբ հանրության վստահությունը: Բազմակողմ գործողությունները կարող են այսպիսով ներառել հավասարազոր վերահսկողություն և լավագույն փորձի փոխանակում՝ դիմակայելու համար այնպիսի հիմնահարցերի, ինչպիսիք են ընտրական չափորոշիչները, լրատվամիջոցների կարգավորումը կամ կոռուպցիայի դեմ պայքարը:

ԱլԳ-ն պետք է նաև խթանի կայունություն և բազմակողմ վստահության հիմնմանը՝ նպատակ ունենալով միավորել գործընկերների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: Այն պետք է նաև խթանի քաղաքական երկխոսությունը ընդհանուր շահագրգռության ոլորտներն ու ընդգրկի Արտաքին և Անվտանգության Ընդհանուր Քաղաքականության և Արտաքին և Անվտանգության Եվրոպական Քաղաքականության որոշակի հիմնահարցեր՝ ներառյալ գործընկեր երկրների մասնակցությունը առաքելություններին ու գործողություններին: Անհրաժեշտ է

ամրապնդել նախօրոք զգուշացնելու պայմանավորվածությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով հակասություններ ունեցող ոլորտներին:

Տնտեսական ինտեգրացիա և ԵՄ քաղաքականությանը համապատասխանեցում

Գործընկերները կարող են օգուտ քաղել դեպի տնտեսական ինտեգրացիա ու ԵՄ-ի հետ իրավական համապատասխանեցմանն ուղղված իրենց փորձերը համակարգելու միջոցով: Որպես երկարաժամկետ նպատակ՝ ԵՄ-ն պետք է խրախուսի այս երկրներին՝ հիմնելու Ազատ Առեւտրի Խոր եւ Համակողմանի Պայմանագրերի (ԱԱԽՀՊ) ցանցեր իրար միջև ու տարածաշրջանային ազատ շուկայական համաձայնություններ՝ հիմնված երկկողմ պարտավորությունների վրա, որոնք ստանձել են ԵՄ-ի հետ ԱԱԽՀՊ-ներով: Սա իրապես կամրապնդի միջտարածաշրջանային առևտուրն ու տնտեսական ինտեգրացիան և կխթանի ԵՄ տնտեսության հետ ավելի լավ ինտեգրվելուն ուղղված երկրների ջանքերը: Հետագա տնտեսական ինտեգրացիային էապես նպաստող տարր է լինելու ծագման զուգահեռ միասնականացումը: Մեկ այլ կարևոր գործողություն է լինելու գործընկեր երկրներին ցուցաբերվող օգնությունը նրանց մաքսային բարեփոխումների ոլորտում՝ նպատակ ունենալով բարելավել հնարավորությունները միջազգային և ԵՄ չափորոշիչներին համապատասխան: Այս գործընթացը պետք է հատկապես ուժեղացնի նրանց կարգավիճակը որպես անցումային երկրներ և ուղեկցվի համապատասխան լրացուցիչ քաղաքականություններով: Որպես հետագա քայլ՝ ԵՄ-ն ու գործընկերները կարող են մտածել ավելի լայն տարածաշրջանային առևտրային մոտեցման մասին՝ հիմնելով Հարևանության Տնտեսական Համայնք, անհրաժեշտության դեպքում ներշնչվելով Եվրոպական տնտեսական տարածքից: Նման Համայնքն ի վերջո կարող է միասնական շուկայի հնարավորություն ստեղծել: Այն պահանջելու է գործընկերներից զարգացնել իրենց տնտեսությունների կարողությունները, որպեսզի կարողանան դիմակայել միասնական շուկայի մրցակցային ճնշումներին ու ցուցաբերեն ոչ միայն ԵՄ հիմքի համապատասխան բաղադրյալներն ընդունելու պատրաստակամություն, այլև դրանք կիրառելու կարողություն՝ դրանց համապատասխան չափորոշիչներով ու գործողություններով: Այս նպատակին հասնելը կպահանջի էապես զգալի տեխնիկական օգնություն և ֆինանսավորում:

Անհրաժեշտ է ձգտել ներգրավել մասնավոր սեկտորը՝ նպատակ ունենալով բարելավել գործընկեր երկրներում գործարար մթնոլորտը: Ջանքեր են գործադրվելու՝ բարձրացնելու համար զբաղվածությունը. պատշաճ աշխատանք, սոցիալական միացում և հավասար հնարավորություններ, որոնց նպատակն է լինելու տնտեսական ինտեգրացիայի դրական ազդեցությունը:

Բազմակողմ համագործակցությունն ընդլայնվելու է դեպի էկոլոգիական քաղաքականություն և կլիմայական փոփոխությանը դիմակայելու համար այնպիսի հիմնահարցերի, ինչպիսիք են բազմակողմ կոնվենցիաները (համաձայնագրերը), ռազմավարության պլանավորումը, էկոլոգիական կառավարումը, կիրառումը, որոշակի էկոլոգիական թեմաները, էկոլոգիական ներդրումները տարածաշրջանային համատեքստում, կլիմայական փոփոխությունների մեղմացումն ու հարմարեցումը, ապագա կլիմայական փոփոխությունների վերաբերյալ

միջազգային քննարկումների մեջ գործընկերների ներգրավումը և արժեթղթերի առևտրի փորձի փոխանակումը: ԱլԳ-ի բազմակողմ գործընթացը նաև ամրապնդելու է գործընկերների տրանսպորտի ու հեռահաղորդակցության միջոցների ցանցերի փոխկապվածությունը իրար մեջ և ԵՄ-ի հետ, ինչպես նաև իրավական միջավայրի համապատասխանեցումը: Ուժեղ ու բազմազան տարածաշրջանային տրանսպորտային համագործակցություն արդեն գոյություն ունի: ԱլԳ-ն կարող է խթանել լրացուցիչ տեխնիկական բանակցությունները այնպիսի թեմաների վերաբերյալ, ինչպիսիք են օդագնացության անվտանգությունը, ներցամաքային նավագնացությունը և ենթակառույցների նախագծերը՝ հաշվի առնելով այլ տարածաշրջաններում շարունակվող բանակցությունները: Հարկ է խթանել նաև զարգացած հետազոտական ու հաղորդակցման ցանցերի տեղակայումը:

Էներգետիկ անվտանգություն

ԵՄ-ի և գործընկերների էներգետիկ անվտանգությունը սերտորեն կապակցված է, և ԱլԳ էներգետիկ անվտանգության հարթությունը պետք է կենտրոնանա փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող միջոցների վրա:

ԱլԳ-ն նպատակ է ունենալու զարգացնել ու կիրառել փոխադարձ էներգետիկ աջակցության և անվտանգության մեխանիզմներ՝ ներառյալ արագ տեղեկացման մեխանիզմներ և անվտանգության համատեղ գործողություններ: Նպատակներից մեկը լինելու է ամրապնդել կապերը էներգետիկ անվտանգության հարցում և ուժեղացնել էներգետիկ ճգնաժամերին պատրաստ լինելը: Այս աշխատանքին աջակցելու համար ստեղծվելու է էներգետիկ անվտանգության հանձնախումբ: Այս հանձնախումբը կարող է քննարկել ԵՄ-ի ԷԱՀԱՑ (Էներգետիկ անվտանգության հեռակա անդամների ցանցի) հետ գործընկերների փոխգործողությունները կանոնավորելու հարցը փաստացի հիմունքներով, կարող է հենվել Գազի համակարգման խմբի և Նավթի մատակարարման խմբի հետ գոյություն ունեցող պայմանավորվածությունների վրա՝ հիշելով այլ ոլորտներում՝ ներառյալ Էներգետիկ համայնքում կատարվող աշխատանքը:

ԱլԳ-ն հետագայում արագացնելու է գործընկերների էներգետիկ քաղաքականությունների և օրենսդրության համապատասխանեցումը ԵՄ գործողությունների և հիմքերի հետ, այդ թվում նաև էլեկտրականության, գազի, նավթի, վերամշակվող նյութերի և էներգետիկ արդյունավետության ոլորտներում: Կարևոր բաժնետերերի հետ խորը համագործակցությունը (ազգային վարչակազմեր, իրավակիրառներ, գործակալություններ) օժանդակելու է այս գործընթացին:

Նպատակ է դրվելու նաև միջին ժամկետներում ստեղծել փոխադարձաբար շահավետ փոխկապակցված ու բազմազան էներգետիկ շուկա ԵՄ և գործընկերների միջև: Սա պահանջում է ԱլԳ-ի համար Էներգետիկ ենթակառուցվածքային գործողությունների պլանի մշակում՝ հաշվի առնելով Երկրորդ ռազմավարական էներգետիկ վերահսկողությունը և ԵՄ Առաջնայնությունների փոխկապակցվածության պլանը: Հարկ է բարելավել նաև գործընկերների գազի ու նավթի պահեստավորման հնարավորությունները՝ ներառյալ համատեղ պահեստավորման վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման խրախուսումը: Գնալով ավելի ու ավելի

կարևոր կարող է դառնալ ԵՄ-ն ու գործընկեր երկրներին միացնող հանրային-մասնավոր գործընկերությունների մշակումը՝ կապված խիստ բարձր ոչ առևտրային ռիսկերին դիմագրավող ենթակառուցվածքների հետ:

ԵՄ-ի և գործընկերների էներգետիկ անվտանգությունը պահանջում է մատակարարման և տարանցման ուղիների խիստ բազմազանեցում: Սա կարող է ավելի լավ ձեռք բերվել երրորդ երկրներ՝ ներառյալ Կենտրոնական Ասիայի երկրները, ընդգրկելու միջոցով: Ուստի ԱլԳ-ն պետք է նպաստի ընթացքի մեջ գտնվող Բաքվի գործընթացին՝ որպես իսկական էներգետիկ գործընկերություն, որտեղ լիակատար մասնակցում են Կենտրոնական Ասիայի երկրները՝ որպես հիմնական էներգիա արտադրող տարածաշրջան, և Հարավային միջանցքի զարգացման միջոցով Մերձկասպյան տարածաշրջանը:

Մարդկանց միջև կապեր

ԵՄ-ի և գործընկեր երկրների քաղաքացիների՝ հատկապես երիտասարդների միջև փոխհարաբերությունները ճանաչվում են որպես փոփոխության խթան ու վերահսկող և խրախուսվում են: ԵՄ-ն հատկապես ճանաչել է մշակութային համագործակցության ու միջմշակութային երկխոսության արժեքը՝ որպես բոլոր արտաքին քաղաքականությունների անբաժանելի մաս, և ընդգծել է մշակութային համագործակցության նշանակությունը քաղաքական գործընթացներին ու մարտահրավերներին դիմագրավելիս: Համագործակցությունը կարող է նաև հենվել մի շարք հայտնի համայնքային ու արտաքին օգնության ծրագրերի վրա, մասնավորապես կրթության ոլորտում՝ ներառյալ լեզուներ սովորելը, երիտասարդությունը և հետազոտությունները: Հարկ է նաև օժանդակել տեղեկացված հասարակության մշակմանը և լրատվամիջոցների դերին մարդկանց միջև կապերը հեշտացնելու հարցում:

4.3. Առաջնահերթային նախաձեռնություններ

ԱլԳ-ի նպատակներին կարելի է հասնել նաև որոշակի առաջնահերթային նախաձեռնությունների միջոցով, որոնք ապահովում են բազմակողմ համագործակցության տեսանելիությունն ու հենքը: Այս նախաձեռնությունները ձգտում են մոբիլիզացնել բազմադոնորային աջակցությունը, տարբեր Միջազգային ֆինանսական ինստիտուտների կողմից ֆինանսավորումը և ներդրումները մասնավոր սեկտորից: Հանձնաժողովը համարում է, որ դրանք կարող են ներառել Ինտեգրված սահմանային կառավարման ծրագիր, ՓՄՁ (Փոքր եւ միջին ձեռնարկատիրություններ) գործիք, Տարածաշրջանային էլեկտրաէներգիայի շուկաների խթանում, էներգետիկ արդյունավետություն և վերականգնվող էներգիայի աղբյուրներ, Հարավային էներգետիկ միջանցքի մշակում և համագործակցություն Բնական ու մարդկային գործոնից առաջացած աղետների կանխման, դրանց պատրաստ լինելու և արձագանքելու հարցում համագործակցություն:

Թեմատիկ հարթությունների և հանձնախմբերի շուրջ աշխատանքի հնարավոր առարկաները և առաջարկված առաջնահերթային նախաձեռնությունների նկարագրությունը սահմանված են Հանձնաժողովի աշխատանքային փաստաթղթում:

4.4. Մասնակցություն

Բացի կառավարական ներկայացուցիչներից և Եվրոպական հանձնաժողովից՝ աշխատանքը ներառելու է ԵՄ այլ ինստիտուտներ, միջազգային կազմակերպություններ (ինչպես, օրինակ, ԵԱՀԿ և ԵԽ), Միջազգային ֆինանսական ինստիտուտներ, խորհրդարաններ, գործարար ներկայացուցիչներ, տեղական իշխանություններ և թեմատիկ հարթություններում ընդգրկված ոլորտների բաժնետերերի լայն շրջանակ:

Հատուկ ուշադրություն է դարձվելու քաղաքացիական հասարակության ներգրավմանը: Հանձնաժողովն առաջարկում է օժանդակել Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ-ներ) հետագա զարգացմանը և ստեղծել ԱլԳ-ան Քաղաքացիական հասարակության ֆորում՝ խթանելու համար կապերը ՔՀԿ-ների միջև և զարգացնելու համար դրանց երկխոսությունը պետական իշխանությունների հետ:

Երրորդ երկրները կարող են ընդգրկվել որևէ թեմատիկ հարթության, հանձնախմբի կամ նախաձեռնության աշխատանքներում կոնկրետ դեպքերում, եթե կա համաձայնություն, որ ընդհանուր շահերը, տվյալ դեպքում՝ աշխարհագրական մոտիկությունը կամ գոյություն ունեցող տնտեսական կապերը, սա շահավետ են դարձնելու:

Հանձնաժողովը ողջունում է Եվրոպական խորհրդարանի ցանկացած նախաձեռնություն՝ կապված ‘EuroNest’ խորհրդարանական համագործակցության հետ, որ այն դարձել է ԱլԳ-ի անբաժանելի մասը: Բացի այդ, Խորհրդարանական ‘Տրոյկան’, որը ներառում է Եվրոպական խորհրդարանը, ԵԱՀԿ-ն և Խորհրդարանական վեհաժողովների եվրոպական խորհուրդը, կարող է ամրապնդել ԱլԳ-ի բազմակողմ բնագավառները:

Հանձնաժողովն առաջարկում է Տարածաշրջանների հանձնաժողովին և Եվրոպայի տնտեսական ու սոցիալական կոմիտեին մասնակցել հատկապես Ժողովրդավարություն, ճիշտ կառավարում և կայունություն և Մարդկանց միջև կապեր թեմատիկ հարթություններին: Այնուհետև Հանձնաժողովն առաջարկում է Տարածաշրջանների հանձնաժողովին հիմնել Արևելյան Եվրոպա և Հարավային Կովկաս Տեղական ու Տարածաշրջանային վեհաժողովը, իսկ Եվրոպական տնտեսական և սոցիալական հանձնաժողովին առաջարկում է մասնակցել Քաղաքացիական հասարակության ֆորումին:

5. Ռեսուրսներ

Ամենապարզ ազդանշաններից մեկը, որ ԵՄ-ն կարող է տալ իր գործընկերներին՝ կապված որևէ կոնկրետ պարտավորության հետ, ֆինանսավորման մակարդակների համապատասխանեցումն է Գործընկերոջ քաղաքական ձգտումների մակարդակի հետ: Զգալիորեն աճող ֆինանսական ռեսուրսներ են անհրաժեշտ՝ սույն առաջարկում առաջ քաշված նպատակներին հասնելու համար:

Այս ֆինանսներն օգտագործվելու են ԱլԳ բարեփոխումների օրակարգը զարգացնելու նպատակով ՀԻԿ ծրագրերի կիրառման միջոցով, ինչն ապահովելու է խորհրդատվություն և ուսուցում (օրինակ՝ Twinning-ի և TAIEX-ի միջոցով) վարչակազմերի համար, ինչպես նաև սարքավորում և դրանց գործունեության համար անհրաժեշտ մասնագիտացված ենթակառուցվածք (օրինակ՝ լաբորատորիաներ): Աճող ռեսուրսները ֆինանսավորելու են նաև հարթությունների գործունեությունը և օժանդակելու են մի շարք առաջնայնությունների: Ի վերջո, դրանք օժանդակելու են գործընկերների տարածաշրջանային քաղաքականություններին, որոնք ամրապնդում են կայունությունը ներքին միավորման խթանման և սոցիալ-տնտեսական անհամաչափությունների նվազեցման շնորհիվ:

ԵՀՔԳ ներկայիս ֆինանսավորումը գործընկերների համար կազմում է մոտ € 450 մլն 2008 թվականին: Հանձնաժողովը մտադիր է առաջարկել աստիճանաբար ավելացնել այս գումարը՝ այն 2013 թվականին հասցնելով մոտավորապես € 785 մլն: Սա կպահանջի լրացնել ներկայիս ԵՀՔԳ-ի փաթեթը € 350 մլն թարմ ֆոնդերով՝ բացի 2010-13 թվականների համար նախատեսված ռեսուրսներից: Բացի այդ, բյուջեի վերահսկման շրջանակներում քննարկվելու է օժանդակության մակարդակի հետագա բարձրացմանն անդրադառնալու համար այս գործընկերների նկատմամբ քաղաքականության նպատակների մակարդակին:

Անմիջական կարիքները հոգալու համար ԵՀՔԳ Տարածաշրջանային արևելք ծրագիրը փոխելու է իր ուշադրության առարկան, որպեսզի պահպանի ԱլԳ-ի բազմակողմ ձևաչափը: 2009 թվականին փաթեթում հասանելի ֆինանսները կարող են օգտագործվել՝ արագ սկսելու համար հրատապ նախաձեռնությունները, և ընթացիկ ԵՀՔԳ փաթեթի մոտավորապես € 250 մլն կարող է վերածրագրավորվել 2010-13 թվականների համար:

Թարմ և վերածրագրավորված ֆոնդերի այս միակցումը կհանգեցնի նրան, որ սույն Հաղորդագրությունում նախատեսված նախաձեռնություններին հատկացված ռեսուրսների ամբողջ գումարը կկազմի € 600 մլն:

Բացի Համայնքի շնորհած աճող օժանդակությունից՝ եռանդուն ԱլԳ-ն պահանջելու է նաև գործնական միջոցներ ապահովելու համար արդյունավետ բաշխում և բարելավված դոնորային համակարգում, ինչպես նաև ավելի մեծ ֆինանսական ներդրումների ներգրավում մասնավորապես ԵՆԲ-ի և EBRD-ի միջոցով: ԵՆԲ միջանկյալ վերահսկողության արտաքին մանդատը հնարավորություն կտա, որ քննարկվի Արևելյան գործընկերների համար առավելագույն մակարդակը և ընդլայնվի դրա շրջանակը: Մեծ ենթակառուցվածքային ծրագրերի համար պետք է քննարկվի ոչ առևտրային ռիսկեր ներառելու միջոցով աջակցությունը պետական/մասնավոր ներդրումների համար: Հարևանության ներդրումային գործիքը (ՀՆԳ) կարող է կիրառվել ԵՄ դրամաշնորհներն ուղղորդելու այսպիսի նախագծերի համար և Հանձնաժողովը կոչ է անում անդամ պետություններին ներդրումներ կատարել ԱրԳ մեջ՝ նաև ավելացնելով ներդրումները ՀՆԳ-ում: Այս հիմնահարցերին առնչվող հետագա տեղեկատվությունը կարելի է գտնել սույն Հաղորդագրությանն ուղեկցող Հանձնաժողովի աշխատանքային փաստաթղթում:

ԱլԳ-ի կիրարկումը կպահանջի նաև համապատասխան մարդկային ռեսուրսների բաշխում Հանձնաժողովի համապատասխան ծառայությունների ներսում: Մասնավորապես, անհրաժեշտ է ուժեղացնել ԵՀ Պատվիրակությունները գործընկեր երկրներում:

6. Եզրակացություններ

ԵՀՔ գլխավոր նպատակը, որ Միությունն էապես շահագրգռված է իր հարևանության նպատակաուղղված մասնակցությամբ լավ կառավարման և տնտեսական զարգացումը խթանելու մեջ, ավելի իրական է, քան երբևէ: Այսպիսով՝ Արևելյան գործընկերության շնորհիվ գործընկերների հետ մեր հարաբերությունների խորացումը թե՞ ռազմավարական անհրաժեշտություն է, թե՞ ԵՄ-ի կողմից քաղաքական ներդրում, ինչը Եվրոպայի քաղաքացիներին շահույթ կբերի:

ԱլԳ-ն կնպաստի բարեփոխումների արագացմանը, շուկաների և հասարակությունների ինտեգրմանը, կայունության ամրապնդմանը և մեր մայրցամաքում նոր սահմանագծերի ի հայտ գալու ռիսկի նվազեցմանը: Հանձնաժողովը կոչ է անում Խորհրդին և Եվրոպայի խորհրդարանին ապահովել ամուր քաղաքական ու ֆինանսական աջակցություն ԱլԳ-ի համար:

Հանձնաժողովն առաջարկում է, որ Արևելյան գործընկերությունը սկսի գործել 2009 թվականի գարնանը կայանալիք գագաթաժողովին, որին կմասնակցեն բոլոր ԵՄ անդամ պետությունների ու գործընկերների պետությունների կամ կառավարությունների ղեկավարները: Այս ‘Արևելյան գործընկերության գագաթաժողովը’ կընդունի Քաղաքական հռչակագիր, որը հիմնում է Գործընկերությունը՝ նշելով իր հիմնական նպատակներն ու սկզբունքները և սահմանելով դրանցից բխող համագործակցության գործընթացի բնորոշ գծերը: